ԵՎՐՈՊԱՅԻ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հոկտեմբերի 2—7-ին, Դանիայի Նուբորգ քաղաքում կայացավ Եվրոպայի քրիստոնեական եկեղեցիների համագումարը։

Համագումարին իրենց մասնակցությունն են բերել Գերմանիայի, Դանիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Ֆինլանդիայի, Հունաստանի, Մեծն Բրիտանիայի, Իտալիայի, Սովետական Միության, Հարավսլավիայի, Կիպրոսի, Ավստրիայի, Նորվեգիայի, Լեհաստանի, Շվեդիայի, Շվեյցարիայի, Չեխոսլովակիայի և Հունգարիայի քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչները։

Համագումարին մասնակցող ավելի քան 200 պատգամավորների թվում ներկա էր նաև Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Վիլյամ Վիսսերտ դը Հուֆտը Ժընևից։

Վեհափառ Հայրապետի հրամանով և Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ, Հայ Եկեղեցու կողմից համագումարին ներկա էր Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը։

Հոկտեմբերի 3-ին, երեկոյան ժամը 7-ին, հատուկ աղոթքից հետո սկսվում է համագումարի առաջին նիստը։ Համագումարի նախագահ Դ. Լիլիեն եպիսկոպոսը բացատրում է համագումարի նպատակը և Եվրոպայի քրիստոնեական եկեղեցիների ներկայացուցիչներին մաղթում հաջողություն։ Ապա համագումարում ելույթ են ունենում մի շարք եկեղեցիների ներկայացուցիչներ՝ ողջունելով բոլոր ժողովականներին։ Դրանով փակվում է առաջին օրվա նիստը։

Հաջորդ օրը, հոկտեմբերի 4-ին, աղոթքից հետո սկսվում է համագումարի երկրորդ նիստը, որտեղ «Քերխեն ուերլդ» ինստիտուտի դիրեկտոր դոկտ. Վայն Լիվեյնը (Հոլանդիա) կարդում է բովանդակալից զեկուցում՝ «Քրիստոնեական եկեղեցու առաքելության մասին մեր օրերում» թեմայով։

Զեկուցման ընթերցումից հետո ժողովականները բաժանվում են չորս առանձին խմբերի, որոնցից յուրաքանչյուրը քննարկում է համագումարի օրակարգում դրված հարցերից մեկը։ Քննարկման աշխատանքներին մասնակցում է նաև հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը, հանդես գալով ողջույնի խոսքով։

Հոկտեմբերի 5-ի և 6-ի նիստերում կարդացվում և քննարկվում են պրոֆ.-դոկտ. Ժ. Բ. Ժեսչքի (Պրագա) «Եկեղեցու դերը մեր խռովահույզ ժամանակներում» և դոկտ. Ն. Ա. Նիսիոդիսի (Հունաստան) «Եկեղեցիների ծառայությունը միմյանց միջև» զեկուցումները։

Հոկտեմբերի 7-ի առավոտյան նիստին Եվրոպայի քրիստոնեական եկեղեցիների համագումարի ներկայացուցիչներին ողջունում է Դանիայի կրոնական գործերի մինիստրը։

Նույն օրվա եզրափակիչ նիստում կարդացվում են համագումարի յուրաքանչյուր խմբում քննարկվող խնդիրների վերջնական բանաձևերը։ Դրանով էլ ավարտվում են համագումարի աշխատանքները։